



ԱՐԾՈՒՄ ՎԱՍԳՈՒՐԱԿԱՆ

ԹԱԲԵՐՆԻ ՀԵՐԵՏԻՄԻՐ ԲԵՐԵՐ
ՆԱԾԻՐՆԵՆԻ ՄԵՆՇԵՆՆԵՆ ԵՄԵՐԻՅ


ԽՐԵԱԿԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՆ
ԽԱՐՏԻՉ ՉԱՐԻԱԿԵՑ ԽՐԵՄԵՆ

1862 — 1863

ՀԱՅԿԵՆ ՀԵՐԵՏԻՄԻՐ

ԹԻՒ 3

ԽՐԵԱԿԻՆ ՀԱՅՐԵՆԱԿԻՆ ՄԵՐԻՆՆԵՆ
ԵՄԵՐԻՅ



THE UNIVERSITY OF CHICAGO
PRESS

CHICAGO, ILL. U.S.A.
1907

PRINTED BY THE UNIVERSITY OF CHICAGO PRESS
CHICAGO, ILL. U.S.A.

1907

CHICAGO, ILL. U.S.A.

1907

CHICAGO, ILL. U.S.A.



ԵՐԾՈՒՒ

Պ. Ե Ս Պ ՈՒ Ր Ե Կ Ե Ն

ՇՐՋԱՆ Ե .

1862—1863

ԹԻՒ 3

ՇԻՆԵԿԵՆ ՀԵՅՈՑ ԿԵԼՆՔ

Ի ՀԵՅԵՍՏԵՆ

ԹՇՈՒԱՌ ՆԿԱՐԱԳՐՈՒԹԻՒՆ

Ա՝ ՆՅՆ ԸՂԷՐՆ ԻՄ Պ. Ա . ԻՂԽԱՆԷՆՅ

Ի Գ. ԳԻՒՆ .

Ձե՛ր վերջին նամակներով կարի իմն կ'ստիպեք թէ՛ «Շի-
նական Հայոց կեանք», շինական Հայոց վիճակը սկսէ նը-
կարագրել . միանգամ էլ էս առարկայի վերայ թող բան

գրվի , միանգամ էլ Ազգային էս թշուառ եւ ամենամեծ
մասին խեղճ վիճակի եւ ամէն կերպով զրկեալ կեանքի
վերայ ուշադրութիւն եւ գթութիւն ունենան ուսումնաւ
սէր եւ հայրենասէր Վարդ ու Վարդ մեր ազգայինք .
եթէ կուզեն Հայրենիք բժշկել եւ լուսաւորել , ահա թող
իրենց սչք ու ձեռքը ձգեն միանգամ այս լերանց շղթաներու
մէջ եւ թիկանց վերայ բնակած հայերուն , որոց ամէնօրեայ
կեանքը մահաբեր գերութիւն , զրկանք եւ նեղութիւն ,
մանաւանդ թէ հոգեկան ու անձնական կոչութիւն է .
եւ որոց վերայ հայող միայն լալ ու մեմալ պիտի :

Ես երեք տարի էս կողմը՝ տակաւին ցամաք չկարողացայ
պահել իմ աչքերը . շատ անգամ կամեցայ սոցա դառն վի-
ճակ զամէն նկարագրել . բայց սիրտս մոլորցուց զիս . ցաւե-
ցի քան թէ մտածեցի :

Խնդրեմ , գոնէ որչափ կարելի է տեսածիդ ու զգա-
ցածիդ չափ յանձն առնուս գրել . մինչեւ ուրիշ անգամ
ես կ'հաղորդեմ քեզ լիովին սոցա ներքին եւ արտաքին դը-
րութիւնք , կենցաղավարութեանց եւ կառավարութեանց
կերպը . սոցա հաւատք եւ բարոյականութիւն . օրէնք ու
սովորութիւնք . որոց վերայ ըմբռնուած ու գերի եղած է
իսպառ իմ զգացմունքը . թէ ինչպէս տակաւին կ'ապրին
տաքա կենդանի , կ'ապրին Հայ եւ Քրիստոնեայ եւ իսկ Քր-
քիստոնեայ : Ո՞վ է սոցա ուսուցանող , խնամող , դատ արող
եւ մխիթարող . ոչ ոք չեմ գտներ , բայց միայն արարիչ
Աստուծոյ շնորհքն ու զօրութիւն . . . » :

Ա՛հ ուրեմն , ով իմ պատուական եւ բարի ընկեր , ես
կընդունեմ քո առաջարկութիւնը . կսկսեմ որչափ կարող եւ
ձեռնհաս եմ , գոնէ մի մասնաւոր նկարագրութիւն անել
շինական Հայոց թշուառ կեանք ի Հայաստան . թողլով

իրաց շատ մասեր որ հեռաւոր պանդխտութեանց, ներքին սովորութեանց, եւ թագուն տեղերու ու դէպքերու մէջ կ'պատահին. շատ տեղեր էլ կամաւ զանց առի. պահելով ուրիշ անգամի. երբ կ'յուսամք եղանից կատարեալ տեղեկութիւն ընդունել եւ հրատարակել:

Հինական Հայք, շինական կանայք, լաւն ասեմ շինական կեանք. « Ջի նոքա են մայրամենայն կենդանեաց » . անձեր քաշածը չեմ գիտեր Ստեղծողի կրկին անէ՞քն է թէ Եգիպտոսի գերութիւն. բայց ձեր լեզուին ասեմ, մեր մեղքն է:

Այլ դու ո՞վ քաղաքարնակ բարեսիրտ եղբայր, դարձուցանելով իմ դէմքս դէպ ի վեճ, կսկսեմ իմ նկարագրուիլ:

Ը.

Փողոցի դուռը շատուց է յուշիկ յուշիկ կ'հարկանեն, քիչ մի ուշադիր եղիր, մի ողորմելի մրմնջանաց ձայնը կայ. տաք սենեկիդ մէջ հերիք է հանդիստ. դուրս ել. ահա երկինք սաստիկ կարկուտ կ'տեղայ. գետինը բոլորովին հեղեղ է կտրեր. ոչ մարդ կարող է գետինը կանգնել ոչ երկինքը հայել. երթեւեկները ողջոյն դադրած են փողոցներից. թռչունները թափթփած են երկնից երեսից, ոչ ձայն կայ ոչ շունչ. բայց միայն հեկեկանք. մի տղայի եւ ծնողի հեկեկանաց մրմունջներ կ'լսուին խորին. այն ահեղ եւ կատաղի ժամուն. որ ամպերն ու ցամաք կարծես մահաբեր կռիւ անեն իրար հետ. Անդ փողոցի դուռը ուռենիի մեծ ծառիմը տակ կձկած կսկծած մի երիտասարդ կին իւր վեցամսեայ մանուկը գրկին կ'օրօրէ կ'գորովէ. բայց անհրաժեշտ է, մանուկը եղանակի դառնութիւնից կարող չէ

գիմանալ. սարսափելով սոսկալով և կանչվառէ. շուռն ու հոգին իրար խառնված, կերպարանքը բոլորովին ուռած եւ կարմիր խաշված. մօր բազկաց վրայ մի դաստակալ եւ եթ կայ որով փաթաթերէ իւր մանկիկը. իսկ ինքը մայր ոտ բորիկ, թիկունքը բաց, շորեր ցնցոտի ու թափթփած, կուրծքը միայն եւ երեսներ ամուր ամուր կապոցներով ծածկած. աչքերը արցունքով եւ սիրտը արիւնով լիք նստած և բոր, բոքի և մորմոքի :

Արարիչ, այս է քո ստեղծուածի վիճակը. արդեօք այս պիտի սիրտերը ինչպէս և օրհնեն քեզ :

Այս կին էր Հայ շինական այրի. որ դաշտից աւել փամ վառելիք հաւաքած, աջնան օրեր եկած էր քաղաքացւոց դռներէն փոխարինութիւն անել քանի կոտոր հին մաշած զգեստի հետ, եթէ ողորմէին քաղաքացիք. որպէս զի տանէր իւր որբ ու անտէր զաւակաց մերկութիւնը ծածկէր. ու այսպիսի վայրկենի մը ըմբռնուած ինկած էր այս փողոցի դուռը :

Այդ ողորմելի կնոջ աչքը միակերպ չարտասուեր իւր գրկի երեսային վերայ. այլ և դառնայ անգամ անգամ իւր աչաց ցօղերը և թափէ դէպի իրենց գեղի ճանապարհը. ստինքը հանգուցած երեսայի շրթանց մէջ. եւ երեսան իւր լանջաց մէջ և շարժի կուզէ կանգնել, բայց չի զօրեր յոտին կենալ. այն ահագին հեղեղը կոխել. այն կատաղի կարկուտին գիմանալ, ուստի կրկին ծնկակոտոր կինկնի :

Ահ, նա ուրեմն ունի այն տեղը իւր տուն իւր սրտի կտորներէց, այո երեք հատ էլ զաւակ ունէր նա, որոց կըրակ վառող չկար այն ժամանակ. վրանին չկար շոր. իրենց խղիկի յարկը ծակծկված էր. և մտաբերէր կին իւր որբոյ վիճակը, իւր տանը վիճակ եւ իւր ինկած վիճակը :

կենդանի, տակաւին կենդանի, Աստուած իմ, և պահես
այս դառնութեանց մէջ քո ստեղծած կեանքը, մի այսպիսի
տառապեալ մօր եւ որբոց անտանելի կեանքը. որ քաղա-
քացւոյն դուռէ անբերելի կլինի անգամ լսել:

Բ.

Այլ տեսնա՞ս, այն հրապարակի կշտից քանի հաւ զօրքեր
կանցնին, եւ նոցա մէջ շրջապատուած մի որորմելի պա-
ռաւ եւ. մի երիտասարդ շինական հայ կին. տե՛ս եւ նոքա
իրեն զաւակներն են, որ կերթան հետ իրենց ծնողին, տա-
կաւին Ռէսը նոր կերթայ յետուստ: Բայց այն ինչ ձայն
էր, այն ինչ ձիւ էր յանկարծ լսվեցաւ. ո՛հ, հարուած էր
այն որ տուին այն կնոջ. պարտուց համար բռնուած կտանեն
գտուել ու տանջել: Սորա էրիկը այս Տաճիկէն հազար զու-
լուշ պարտք է վեր առեր երեք տարի յառաջ եւ զնայցեր
Ստամբուլ, մուրհակի մէջ գրաւ տուած է կայքն ու կալ-
ուածը. այն փոքրիկ արտը, որ իրենց դրան մօտն է. չորս
հաւ եզ, եւ վերջապէս տակաւին հնար չէ եղեր, բռներ
իւր ամուսինը, իւր երկու տարուան առած նորահարս ա-
մուսինը տուերէ երաշխաւոր պարտուց. պարտատէլը մէկ
տարի տիրեց այն արտին, երկրորդ տարին տարաւ եզները,
այժմ էլ էկած է մուրհակը ձեռք. թէ ժամանակ կանցնի
Ստամբուլից թուղթ չի գայ. փարանը երկու հազար զու-
լուշից անցեր է շահբով, իմ երաշխաւորը դու ես, իմ փա-
րան էլ դու ես:

Թշուառ կիներ երբեմն մուրալով սեր կընծայէր նորա,
երբեմն փոխինդ, երբեմն հաւեր, հաւու ճեւտեր, ուլեր,
գառներ յուղարկելով և շահէր նորա սիրտը. իսկ ելք երեք

օր է ահա սպառեցաւ կնոջ սյդ անիրաւութեանց պատա-
րադները. անիրաւեցաւ անիրաւ սա . խոտացոյց իւր խը-
սութիւնը ու էլ չթողուց ժամանակ. չգլթաց պառու ա-
ղաչանաց, կնոջ արտասուաց, տղայոց հառաչանաց, մոռա-
ցաւ կերածն ամէն, հարուածեց իւր ձեռքով. ողորմելի կը-
նոջ թիկունքը կապուտցած են ամէն . լացին այն ընտան-
եաց աչքերը իրենց խեղճութիւնից, լացին եւ այս անի-
րաւի հաւից : Գեղացիք ամէն չկարողացան փրկել դա,
վերջապէս քաշեց չարաչար ու բերեց կ վարէ ի դատաստան
զօրաց ձեռքը մատնած : Եւ այն Ռէսն է նորա ետեւէն
կերթայ պոչտպանել. այն պառաւը կնոջ մայրն է կ երթայ
աղաչել. այն երեխայք իւր զաւակներն են կ երթան լալ և
ցաւակից լինել :

Ահա այս այն տեսարան է, այս ձայն այն ողորմելուն
էր, շինական Հայ կնոջ ողբալի կեանքն ու վիճակն է .

Յոյս, ապաւէն, փրկուել Արարիչն է մնացեր միայն շինակա-
նին . Աբարիչ միայն ազատէ իւր ստեղծած մարմին ու հոգին :

Գ.

Մի թէ կամուսնանա՞ն եւ տքա՞, այդ ի՞նչ սարսափելի
հարսանիք : Այդպիսի վշտալի սիրտերը տակաւին սէր կը դ-
գան. զարհուրելի վոյրկեաններ տակաւին ուրախութիւն
պիտի կրեն . գերութեան օրեր տակաւին ժառանգներ
պիտի վաստկին, զաւակներ պիտի ծնանին .

Դ.

Տես մի այլ տեսարան . խումբ մը երիտասարդ և պատանիք :

Փողոցներու մէջ զանգակի ձայներ կ'հնչվին, կա-
րաւանի նշան է. այս ձայն, որ ամէն շաբթու կը-
հնչվի այստեղ: Ահա նոքա են, որ խմբովին պիտի
երթան պանդխտութիւն.

Ահ, կամովին եւ ակամայ անձամբ անձին գերութիւն.
Աղաղակը նոցա աղաղակն է. ահա այն պատանեաց մայրեր
իրենց զաւակները կուլան. ահա նորահարս ամուսիններ ի-
րենց փեսաները կուլան:

Թշուառ սէր ծնողական. Թշուառ սէր ամուսնական:

Եւ կը կուլայ, որ իւր որդին պիտի նշանէր հարսանիք ա-
նէր. միւսը կուլայ, որ իւր հարսնութիւնն կ'մնայ անմխիթար
եւ անտէր: Իսկ փեսայացուք եւ փեսաներ դարձուցանելով
թոթափելով իրենց սէրն ու սիրտ ծնողաց, հայրենեաց եւ
օրերեաց վերայ, հեծան ու քշեցին բառնալով իրենց
բեռները անչափ արտասուէքներով եւ ծանր պարտքերով:

Ե.

Դու տեսնո՞ր ես նոցա, մանուկներ կաթն եւ ցաւ միա-
փն կ'ձաշակեն. այսրդ ջուր եւ դառն քրտինք միասին կը-
լատեն. հայն ու հարուած միասին կուտեն:

Առանց վարտիքի եւ շապիկի մերկ մերկ մոխիրներու
մէջ, արեւու եւ բուքերու տուրբէլ կ'թաւալին. նոցա մա-
տաղ աղջիկներ ոտ բոբիկ, գլխիբաց, դաշտի մշակաց հետ
նոցա պէս ու նոցա հաւասար կ'տքնին. փշերը կոխելով,
տաւար շահելով, հաց հանելով, բանջար ժողվելով, մարդ
եւ գաղան տեսնալով, երկիւղ եւ չարիք կրելով. ձեռքով
գարի կ'քաղեն, ցորեն կ'հնձեն, տան ծառայութիւնները
կ'հոգան. հիւանդ եմ ասել ամօթ է. իրենց կերածն է կո-

րեկ եւ գարի. ցոյեներ պարտուց փոխարէն կամ շահք տա,
լու համար միայն կ'վատկին. եղ կ'հանեն իրենց բաժին
չկայ. մի տակ շալ կամ կտաւ է նոցա հագուստը:

Ահա Հայ շինականի առ հասարակ ընտանեկան դրութիւն:

Քաղաքացի փափկասուն տիկնայք, վսյեւչասէր օրիորդք
Թող տեսնեն այս կերպ կեանք:

Դէ խմացիր ուրեմն աղցա սէրը, որ նմանեաց հետ կը
լինի. այո ինչպէս կոյն նոյնպէս եւ երիտասարդ միակերպ
կ'անին. ինչպէս հարս, նոյնպէս փեսան այս կերպ կ'կառա-
ւարվին. ինչպէս ծնողն, նոյնպէս եւ ծնեալք հաւասար
կ'ապրին: Բայց աւանդ նոցա հաւասարութիւն մի անսահ-
ման Թշուառութիւն է:

Թշուառութիւն է մանկան իւր ծնած ըտպէից մինչեւ
գերեզմանը: Նա չէ Թէ Թշուառ է, որ չոր հողի վերայ
կ'հանգչի, նա Թշուառ չէ, որ մագեղէն խիստ շորերով կը-
խանձարեն իւր փափուկ մսերը. նա Թշուառ չէ որ գարի
հաց ուտող եւ սոսկ ջուր խմող շինական մօր պարզահամ
կամը կ'ծծէ. նա Թշուառ չէ, որ զրկուած է ամէն կերպ
փափկութիւնից եւ քաղցրութիւնից. ոչ, նա այսպէս շատ
երջանիկ է քան զքեզ: Այլ ահա նորա Թշուառութիւնք:

Երբ ինքը տակաւին առաջին անգամն է աշխարհին աշ-
խարհ կ'անչէ, երբ իւր մօր կուշտը նստած են ուրախակից
բարեկամներ, երբ Արարչին օրհնութիւնն ու Նորածնին
կանաչ արեւու շատութիւն կ'մաղթեն. երբ ծնողաց դառ-
նացած դէմքերը հազիւ կ'ժպտան, ահա բռնութեանց ձայ-
ներ կ'խշխշան գեղի հրապարակը. եւ գալով գալով մին-
չեւ նոցա շեմը կ'կոխեն. խիւղի փոխվեցաւ առարկայն,
փոխուեցաւ տեսարան. Սիւս մի կերպ տուրք ժողովողն է նա
կամ պարտաւորն է, կամ մի նոր տուգանք (սալէան)

ժողովող է եկեր . կամ քիւրտեր էին նոքա էկան Գլլաղ, 1 վերջապէս մի կերպ Աստուածային պատուհաս, որ գիտէին եւ պատրաստ էին արգէն շինական հայերն ընդունել . ահա իրենց անկախութիւնն :

Լաց մանուկ, թող լայ խղճալի մանուկն :

Գնաց հայրը, Կնաց մայրը . Էմնաց կաթն ջամբող . առաջին զրկանք քո առաջին կենաց :

2 մնացին գրգռող օրօրող եւ գորովող ձեռները . հայրը այն կողմ աղաղակ կ հանէ, տուրք կպահանջեն, հարուած կբեղունի . վաւերի փող չունի, պարտք պիտի անէ, պարտատէրը էնտեղ գոնէ հիներուն տոկոսիքը կ զօրէ կ զարնէ եւ կուզէ, տոկոսիք՝ որ քան զգլուխ կրկին աւելցեր էր, կուզէր, որպէս զի նորն նորագէ :

Վայ նորա գլխուն . նորա գլուխը սորա ոտքի տակ, նորա բռան տակ, միւսի ցուպին տակ կգլորուի կջախջախուի .

Նորա կինը որ դրան ետեւ կայնած, սիրտը դէպի նորածին եւ աչքերը դէպի իւր ամուսին այս աղետալի տեսարանին ու ցաւին յառած կ հեծէր հեծեծէր . այժմ լապառ թողուց մանուկը եւ թռաւ ու անկաւ մէջ այն աղետից, յորմէ եւ իրեն բաժին ինկաւ թիկունքն ու մէջքը հարուածով միմուսացուցել . որ եթէ քանիմ օր յառաջ լինէր, պիտի վիժէր իւր զաւակը : Ահա ծնողք մանկան, ահա մանուկ ծնողաց :

1 Սրանաբնակ Քիւրտեր աշնան եղանակներ կուգան Հայոց գեղերը ձմերեւու . եւ հայեր ամէն տարի իրենց տան ու անտանոց պէտքերուն հետ կ հոգան ու կ պատրաստեն նոցա համար եւս ամէն կերպ պիտոյքն ու կարիք : Թէ եւ (սմանաւ) հոգի եւ բարեխնամ տէրութեան շնորհիւ ասոնք արգելաւած են . սակայն եւ ներքին տեղեր կշարունակուին տակաւին :

Հայ վայ երկուքին. վայ վայ երեքին .

Թող մանուկ լայ, որ պիտի կաթ ուտէ, կհանք ուտէ .

Դարձան վերջապէս ծնողք մանկան եւ ամուսինք մի. մեանց կուլան առ հասարակ տնով ու տեղով : Բարձից մայրը իւր մանուկ տաքցած տագնապած կուրծքի վե. լայ. մանուկը արտասուք կ'քամէր իւր նորաստեղծ աչքե. րէն եւ կ'խառնէր այն աղիքը իւր ծծած կաթին հետ. կաթ, որ մօր ցաւած երակներէն կաղերբանար :

Այն օր սկիզբն էր որ ջամբեց ծաշակեց այս մանուկ բոլորովին դառնութիւն եւ լաց եւ ցաւ .

Ար հանգչէին սիրտերը կամաց. կամաց. կանցներ ալէկո. ծութիւն նոցա երկկամուլքներէն . Թմրեցան կապուտակ երակները, որ ուռած էին ծեծվելէն, նուազեցաւ եւ կը. հանդարտէր մանկան ոգինը, վերջին հսկեկանք կ'հսկեկար ողորմելին . եւ ահա մի եւս վայրկեան դառնութիւն : Գեղի Գզլորը (Մէհլէ Տախթարի) չորս կամ հինգ քաղանա. կիրպ բարբարոս քիւրտերը ետեւը ձգած մտան տուն :

Արդէն գեղի մէջ փրթած փութորիկէն, ահագին ձայնե. րու գոռում գոչումէն սարսափ մը՝ կամ գոնէ այսպիսի բաներ իրենց սովորական լինելով, որոնց զգացում մը մի. այն զգացքեր էին այս ողորմելիք. դաւաղաններու, հայհո. յանքներու եւ թշնամանաց ձայներէն՝ յայտնի էր որ բար. բարոսները ձմերբիւ (Գլալ) էկած էին գեղ, որ Ռէսին կ'ծեծէին . Գզրին կ'հայհոյէին, միւսի վերայ սուր ու գէնը կ'քաշէին. վերջապէս բաժին եղաւ գեղի վերայ . եւ այս չորս կամ հինգն էլ այս տան բաժինն էր :

Ո .

Դարձեալ ցաւք անտանելիք. դարձեալ կսկիւր անբերե.

լիք : Ոչ մանուկ , ոչ աղջիկ , այն տան մէջ էլ բան չ մնաց
այն ընտանեաց գթութեան եւ սիրոյ առարկայ . մոռացան
մինչեւ անգամ իրենց գլուխները եւ եզան բոլորովին
այն էկողներուն ազաներուն գերի, վերկացին ծառայել բա-
րեւել, նոցա կօշիկները հանել եւ սրբել, նոցա զգեստները
թօթափել պահել : Այն կողմը խեղճ կնիկ թոնիր կ վա-
ռէ, որպէս զի Գշլաղներ տաքնան, եւ թէ կան աղջիկներ
հարսներ, նոքա էլ կերակուր կ պատրաստեն ջուր կրերին .
խիկ էրիկ մարդիկ Գշլաղներուն կայք ու ծանրութիւնները
ներս կ կրեն, ձիեր ու տաւարներ կ տեղաւորեն :

Հանգաւ թոնիր, մարդիկ իբր թէ պրծան այն գործքե-
րից . պարզեց կին ջուրերը թոնիրի շրթունքը , շարունեցան
կախեցին ոտները թոնիր Հայն եւ Գիւրդ միասին . էրիկ
եւ կնիկ խառն բոլորեցան հաց ուտելու, կարագ, ձուազեղ
սեր, փոխնդ, եւ այլն . այս է Գշլաղներաց հանապազօր-
եայ կերակուր : Տան աղջիկներ եւ հարսներ միայն յոտին
կանգնած կ ծառայեն նոցա :

Երեխան էն կողմը խեղճ կրակ կուլայ . բայց մայրը
այսպիսի ծառայութեան մէջէ . ժամանակ չկայ, որ աղսյին
վերայ դառնայ :

Երեկոյ եղաւ , պառկեցան Գիւրդերը իրենց տեղ ոտ-
ներին պարզած թոնիրը . չկար սենեակ, չկար ուրիշ տուն
նոցա : մի եւ նոյն թոնիրի վերայ պառկեցան ընտանիք ի-
րենց զաւակներով, տանուտէրն իրեն ամուսինով :

Այն կարգն է տհա գուցէ եւ աւելի բարբարոսաց Գշլաղը
Հայաստանի Հայ գեղերուն մէջ . Հայ ընտանեաց մէջ ,
վերջին բառով, Հայ գերիներուն մէջ . եւ այս կերպով ա-
հա կ ծնանին կանանին , Աստուծոյ արեւը ու Արարչի ար-
ուած կեանքը կփայլեն , վայելել է այս թէ վստիսել :

Ա՛հ մարդկութիւն , էս ի՞նչ դառն կենաց բաժին տուած ես Հայսուն .

Ամէն առաւօտ ձիւն ու բուքի մէջ խեղճ մատղաշ աղ-
ջիկը մեծ սափոր դրած վեր թեւին բորեկ ոտերով ձիւնն
կ'կոխէ , եւ օր քանիմը անգամ կերթայ աղբիւրից ջուր
բերել . տեսնան իւր կուսութեան ճակատէն քրտինք կ'ցօղէ
այտերուն վերայ , եւ փռուած վարսերէն սառած կ'կախ
վին լո՛ւսայ լո՛ւսայ :

Էս կողմ հարսները լուսաց անելով , նոցա ընտանօրէն
ծառայելով ծուխ ու մութի մէջ , ամօթի եւ երկիւղի
տագնապաւ ու քրտինքներով թաթախված են . էրէկ մար-
դիկ առ հասարակ նոցա ձիւր ու տաւարներ հոգալու ,
խոտ եւ գարի ծարելու տալու կ'ըբաղին . ունենան չաւիտ
նան պէտքէ ծարեն տան :

Ահա այստեղ շինական եւ իւր վաստակ ինկաւ գերու-
թեան վիճակ . եւ բարբարոսն անիրաւաբար ընդունելու
թիւն եւ ծառայութիւնն օտանալով , տակաւին իբրեւ իշ-
խան իբրեւ պետ եւ իբրեւ իւր սեպհականութիւն , այն-
պէս կ'ըլխէ այնպէս կ'հրամայէ , եւ շատ անգամ կ'հարկանէ :

Է .

Սակայն միթէ հաւասար էր այս ցաւեր ամէն շինակա-
նին . աղբանո էին զրկեալ էին հաւասար կեանք հայաստա-
նի շինականին . — Գիտեմ ինչ է բանդ . բայց միթէ եւ
այն հարուստը հանդիստ է իւր կենաց մէջ , ոչ երբէք , այլ
որչափ շատ ունէր նա , առաւել ցաւեր ու թշնամութիւն-
ներ կ'կրէր :

Տես այն մէլիքը . քանի երամ ոչխար ունի , քանի փոխ

կիւթանի տաւարներ կան. նորա ցորենի հորերը, ամբարներ, բարձր բարձր դէզեր, կովերու ձիերու նախիր. ծառայից խումբը, բարեկամաց բազմութիւն. ամէն օր չափերով հաց կեփվի սորա տունը. լիտրով եղ ու պանիր կերթայ. օր չըկայ որ ոչխար չմորթեն. եւ այս ամէն ուսողներն են կամ մերձաւոր ու մեծաւոր քիւրդեր, կամ քաղաքէն եւ կած պաշտօնակալներ ու պետեր :

Բայց ահա երկու շաբաթ է որ նորա ոչխարները թալան տարան. մի օր կիւթանը քակեցին խովն ու տաւարներ քըշեցին տարան. քանի անգամ է ցորենի հորեր կ'պարպվին. այն կողմը դէզեր մոխիր դարձան. Անցեալ օրերն էր որ մեծ իշխան Սօրօն սպաննեցին. Մէլոյի գառները այս տարի թալան տարած էին. Մուխի Եղօն քաղքէն էկած ժամանակ չորս գնդակ յարձակված է վրան :

Քանի տարի է ինկերեն մէլիք Պատալի ետեւից որ սպանեալ :

Չորս հինգ տարուան մէջ քանի մեծամեծ ու երեւելի տներ փչացան, անձերը սպաննուեցան. եւ նոցա աղջիկներ, հարսներ ու կնիկներ յափշտակուեցան. ումից. ծոյն իսկ քիւրդերից, եւ ինչի՞ չեն պաշտպաններ այն տան հաց ու բարին ուսող քաղաքացի պետեր ու մեծեր : Այստեղ միայն հառաչանք եւ ոչ այլ ինչ :

Մենք դառնանք էս կողմ տեսնենք մեր զրկեալ ու տառապեալ Հայ գեղացի համբաներ, ռէսներ, կամ մի հասարակ որ եւ իցէ շինական դատարկ էկաւ միանգամ քաղաքացի բարեկամիմը կամ մեծիմը դուռ խնդրիք կամ յարգանք տալու. ոչ երբէք. այլ երբ էկաւ նա ունէր իրեն հետ բեռ կամ շալակ, կամ կենդանի :

Միայն այս կայ, որ վերջապէս զրկեալ կամ շինական

Հայն տայ չտայ անիրաւ է, կամէի ասել անպաշտպան է. թէ եւ իւր կենաց վերջին պատառն անգամ իւր արող հաւատարմութեան կամ երախտադիտութեան զոհ տայ, ինչպէս բնական է իրեն. բայց դարձեալ անապաւն է :

Իւր աչքերը միայն թող ձգէ սարերի վերայ . եւ ահա Արարիչ միայն թող գտնէ իւր տէր, իւր հայր, իւր պաշտպան եւ ազատարար . մինչեւ անգամ ինքն իրմէջ էլ կը վնասուի քան թէ կ'պաշտպանուի :

Ասածիս ապացոյցներ Զիւրգիստանու եւ իրեն մեր ձաւոր գաւառներու ու քաղաքներու միջի ժողովրդեան վերայ պարզ կ'երեւին. թողում հեռաւորները :

Հայ վայ, Հայ վայ, այս է մեր կոչում. այսպէս եմք դարձեր ամէն տեղ. որ երբեմն էինք Հայ հայ, Հայ հայ :

Այնչափ գողողութիւն եւ աշխատի ցածութիւն. այնչափ ահեղութիւն եւ աշխատի սարկութիւն :

Բ.

Արքուհի տասանորդ ստացող (շահնա) մի նոր կերպ տէր է նա գեղիմը մէջ. էկած օրէն մինչեւ գնաց ամէն օր եղ ու ձուակեղ, փոխինդ աւ գաղալ, սեր ու կարագ, խորովու խորոված իր սեղանին վերայ իր սենեկին մէջ լինք ու պատրաստ պիտի գտնայ : Ապա թէ ոչ փայտ ձեռքը, զէնք վրան, այսպէս յանկարծ ու համարձակ կ'հանդիպի. հայհոյանք, ապաւնալիք, հարուած է թափէ. մինչեւ ինկնիս փաթաթութիւս տաները. ծառայ դառնաս, հող դառնաս չուն դառնաս, հագիւ տասն միջնորդով եւ մէկ ոչխարով կամ ուրիշ բանով քեզ հետ հաշտուի :

Բայց միթէ Արքուհի տասանորդ ժողովոյն բարեխնամ

Տէրութեան կողմից իւր պաշտօնի հետ այսպիսի անիրաւ արտօնութիւններ էլ առած ունի. ոչ, ոչ երբէք . քաւ լիցի : Սակայն ո՞վ է արդարութեան դուռը բոլորքոյ . ո՞հ միջնորդներ ո՞ւր են : Արդի առաջնորդներ ու ազգի մեծերը ո՞ւր են . փառք Աստուծոյ թէեւ կան պակաս չեն . բայց խոհեմութիւն կանեն :

Թ .

Ողմեցի հայեր այս տարի ամբողջ ցաւալի ու ցրիւ զարթանութիւն մի եղան . շոտուց ի վեր տոկալով դէմ կայնելով իրենց մերձաւոր բռնաւոր քրդերու վնասներուն ու թշնամութեանց . վերջապէս այսօր հարիւրաւոր տներով քաջ ու անուանի բնակիչներով լցուած Ողիմ ունայնաւ ցած է իւր հայերէն . ողջ Աստուրական որ կճանաչէր սոցա ալի ու բարի վիճակը այսօր ի ցաւ սրտի կ տագնապի . անշուշտ եւ առ հասարակ Ազգայինք պէտք է ցաւին . եթէ գիտենային որ Ողմեցի Հայն իւր մանկութիւնից մինչեւ գերեզմանը մէկ ուսի վերայ դրած ունէր բահը միւսին հըրացան . մէկով իւր գործը կ գործէր , միւսով իւր թշնամին կ հալածէր . մէկ ձեռքը կ բռնէր մանգաղ միւսը սուր . մէկով իւր հունձը կ հնձէր . միւսով իւր հնձածները կ պաշտպանէր . ու այսպէս կ ապրէր . կային նոցա մէջ լաւ կայքեր ունեցող . ո՞հ նոցա մեղրի փեթակներ այսօր կողբան անտէրութեամբ . նոցա հայրենի հաւենի վայրերը մնացին իրենցից անտէր . եւ իրենք ցրուած երկուսը մէկ գեղ, հինգը մէկ տեղ . ո՞հ եւ շատերը օտար աշխարհը գնացին :

Ներքին Բիւրոյիստանու հայեր գրեթէ ամէնքն էլ այս վիճակը իրենց համար ընտրած են . թողուլ եւ գալթեր :

Այստեղ բռնենք փոքր ինչ մեր արտասուքը եւ խորհրդա-
ծելով ասենք այդ եղբարց. «Մի՛ մի, մեր սրտի կտորներ,
դուք մի կոտորուիք մի կտորուէք մեզնից, մի թողուք ձեր
հարց շիրիմները. կախեցէք ձեր մանկանց օրօրոցներ երկ-
նից ամպերից, այդ մըրիկը կանցնի անշուշտ. ձեզ այցելու-
թեան Աջը այն ամպերի միջից կ'հասնի. ուրիշ տէրուց
ուրիշ աշխարհաց մէջ ձեզ համար չկայ կեանք. թառէք
ձեր հարց շինած ու ժամանակի քակած աւերակների մէջ,
այդ փոշիներու մէջ կայ կենդանութիւն. եւ հայու համար
միշտ քաղցր ու բարի է յոյս՝ Օսմանեան արդար եւ բա-
րեգութ թէրութեան ներքեւ. նա որ իւր հպատակներ
ի բարօրութիւն եւ ի լուսաւորութիւն կ'կրթէ. Ռւբին
յուսամբ ու աշխատեմք. ժամանակ եւ Ատուած կ'վրկեն
զմեզ. գործենք ու համբերենք, Տէրութիւն ու Ազգը կ'եր-
նամեն զմեզ :

Ժ.

Կեղացին ամէն օր իր հաց եւ կերակուր ետած ժամա-
նակ կ'սպասէ հիւրի : Իբրեւ ճանապարհորդ քաղաքացիմը
հանդիպաւ մեր գիւղը, Տաճիկ էր թէ չայ. վերջապէս ա-
ռաջին անգամն էր այս մարդուն մեր գեղը գալ. իջաւ
ձիէն, եւ ահա եօթն կամ ութ ձիաւոր էլ երեւեցան նա-
րա ետեւէն. խափեխափ հասան ու ահագին շփոթ վեր-
թուցին մէջ գեղին. քաղաքացի մի խումբ երիտասարդներ
երենց զբօսանաց ուրախութեան համար եկած : Դէ՛ բեր
ձիերուն կերակուր, դէ՛ սլարդեցէք ջուլն ու թաղիս, դէ՛
զինեցէք դառն ու ոչխար, շուտով բերէք սերն ու կարագ.
նստան սոքա եւ իրենց ուրախութիւն սխան :

Ուրախութիւն, որ կազմեցին գեղացւոց զրկանքներով :

Այնինչ ողջ գեղացիք կնիկով տըղով թափեր էին այդ պարոններու պարն ու հրճուանքը տեսնալու, յանկարծ էն կողմէն ձիաւոր մի էլ հասաւ. խաբշ ժողովողն էր քաղբից յուղարկված :

Մոռացան ամէնքը այն խաղն ու տեսարան, վազեցին էկողի յառաջ, իջաւ չափէէն իւր ձիուց, բարեւեց ու գընաց Ռէսի տուն, հաճոյից ուզածը կերաւ, սպա սկսաւ առաջարկել : Էնտեղ կկանչուէին պառաւ կնիկներ, մէկին կը հարկադրէին չորս մարդու տուրք տալ. պատճառ, որ սուս չորս որդիքը Ստամբոլն են. Թէ եւ բողոքեց թշուառ պառաւը Թէ՝ մի տարի չորս ամիս է որ իմ մէկ որդին օտարութեան մէջ մեռերէ. բայց ով էր լսող : Ինքն ասաց ինքը լացաւ, ինքը լսեց ինքն ցաւեցաւ :

Մէկին կասէին քո փեսայի կողմէն այսչափ դուրուշ խաբշ պիտի տաս. = Բայց իմ փեսան երկու տարի է անյաջողութեան մէջ է, հիւանդ է, ոչ թուղթ եւ ոչ փարայ կը յուղարկէ. նա Ստամբոլ հիւանդութեան մէջ. մենք այստեղ աւուր հացի կարօտ, չորս հինգ ձէթկիկ ձաղերով ամէն օր կուլանք : Խնայէք մեզ :

— Չէ չէ. անկարելի է. փախ, փախ :

Այնտեղ կանչեցին եւ բանիմը նորահարսներ, որոնցմէ կը պահանջէին իրենց երիկներու խաբշը պատրաստեն տան. խղճալիք ամօթխածութիւնից աչք ու երեսնին կապկպած ու պառաւներու ետեւը կայնած, ձեռքով ու գլխով իրենց անձաւորը յայտնեցին, բայց չափէէն գողալով եւ երկիւղ տալով պատուիրեց որ պարտք անեն ճար անեն տան : Եւ գնացին նոքա դողալով ու լալով :

Մէկ աւուր մէջ ամէն գեղացիք կընիկ, տղայ, մեծ,

պատիկ լցուան քաղաքը, խանութէ խանութ մարդէ մարդ գնալով լալով ու աղաչելով. քանիմ օր հազիւ զարձան գեղ. որ մուհակ էր տուեր. որ ծանօթ ունէր երաշխատոր էր տուեր, որ ստացուածք ունէր գրաւ տուեց. վերջապէս պարտք արին փող բերին հոգալու իրենց խաղը :

Սակայն էն հարսներն են նոքա որ կծեծուին, եւ որ յառաջ կ'վարուին քաղաք տանել ու բռնել : Ողջ գեղացիք չեն կարող միջնորդել ազատել. պատճառ որ սոքա ամօթից եւ ծանօթ չունենալից չէին կարողացեր փող ձարել :

Հայաստանի հայ կին այսպիսի վշտաց եւ տառապանաց մէջ նահատակէ, եւ բազմակերպ չարչարանաց մէջ ճրգնաւոր է. ճգնաւոր է նա եւ իւր ամուսնական սիրոյն եւ զրօքաբախտ սիրելոյն հետ. կ'զրկէ իւր փեսան հազիւ քանիմ ամսոյ չափ, յետ այնորիկ զրկեալ եւ կարօտ արտիւ ու աւաքերով կուլայ իբրեւ տատրակ մի իւր միայնութեան մէջ իւր, նազելի եւ դաշար բնութեան մէջ. եւ մինչեւ տասն տարի կ'մնայ նա զուրկ եւ սուրբ իւր սիրոյն ու սիրելոյն մէջ, հաւատարիմ այն սուրբ օրինաց եւ իւր կենաց մէջ : Մանկունք կան տասն կամ տասներկու տարեկան, սակայն իրենց հայրերը նոր պիտի տեսնան ճանչնան, երբ Ստամբուլից գան :

Բիւրակերպ աղէտներ կան Հայ գեղացիի կենաց մէջ. ես որ մէկը կարող եմ թուել. նորա ամէն վայրկեան թըռուառութիւն է. եւ սորա համար կարծես շատերը սովորական եւ Աստուծոյ գրած անջինջ ճակատագիր համարելով իրենց անզգայ եւ անբան գրութեամբ կ'ենցաղաւարվին. միշտ գոհ Արարչից, գոհ երեւց վիճակից, գոհ իրենց կեանքից եւ աշխարհից. միամիտ եւ անմիտ, տառապեալ խաւարեալ իրենց օրերը կանցուցեն, առանց բնաւ զգալու կամ հասկընալու մարդկութիւն ազգութիւն :

Մնաց ուրեմն մէկ ճանաչողութի պահանջել նոցանէ :
 Հինական սյո գիտէ թէ Ստամբուլ Թագաւոր կայ որ աշխարհ
 հիս տէրն է . քաղաքը Փաշա կայ որ աշխարհիս մեծն է . նա
 եւ Պատրիարք ու Առաջնորդ կայ , որ իւր հոգեւոր տէրն է .
 ու սոցա անունը գեղացիի մօտ այնչափ մեծ է որ մէկը
 տեսած ժամանակ երկրպագութի կանէ . միւսը տեսած ժա-
 մանակ երես կ խաչակնքէ : Բաց ի սոցանէ նա ի՞նչ կ ճա-
 նաչէ , ԱՍՏՈՒԱԾ ՄԸ , ԱՐԱՐԻՉ ՄԸ , ՓՐԿԻՉ ՄԸ . որոյ
 անունն եւ սիրոյն համար է այսչափ չարչարանք կ կրէ , ու
 պիտութեամբ կ համբերէ :

Ա՛հ . իմ ասած չայ շինականները Եգիպտոսի հայրերէն
 մեծ ճգնութիւն կանեն . արիւն թափող մարտիրոսներէն շատ
 նահատակութիւն կ կրին :

Թէ ի՞նչպէս կ ճանաչէ նա իւր Ստեղծիչը . ես կ տարա-
 կուսիմ կերպը գտնել , այլ միայն մի նմանութիւն ասեմ .
 ինչպէս Թաշուհն ամէն առաւօտ դէմ բարիչուսոյն իր քնից
 դարձնած կըսկսի երգել փառաբանութիւն Արարչին . ինչպէս
 հաւ ջուր կ խմէ եւ երկինք կ հայի գոհութիւն տալով
 Արարչին . այսպէս ուսերէ գեղացին իւր կերած ժամանակ դո-
 հանալ Ստեղծողից , իւր բնած ու զարթնած ժամանակ փսփո-
 փայ . Բրիատոսին , աղօթել իւր հոգւոյ փրկուէ համար . աղո-
 թել իւր մեղաց թողութեան եւ աշխարհի խաղաղութեան
 համար , որ ուսեր է իւր մօրից իւր տղայութեան օրերից :

Նա ունի իւր սրտի եւ հոգւոյ մէջ այնպէս կենդանի
 հաւատ քրիստոնէութեան եւ անչափ յոյս փրկութեան , որ
 կարելի է ասել թէ , մեք նոցա արդարուն շնորհիւն է կապ .

րիմք . բայց թէ ո՞վ է ուսուցեր իրենց այդ հաւատք ու արդարութիւնը . արդեօք վարդապետներու քարոզութիւնք, առաջնորդաց խրատ, քահանայից շրթո՞ւնք, ոչ ոչ . այդ ամէնը անտեսանելի եւ անլսելի են շինականին . գրքերից, աւետարանից են տեղեկացեր, ոչ ոչ , նոքա այդ ամէնից զուրկ են . դու հարցուր թէ ո՞ւր է այս գեղի եկեղեցին . ո՞վ է այս տեղի քահանայն , եկեղեցի չկայ մեր գեղ . վից ժամու ճանապարհ հեռու այն գեղի մէջն է եկեղեցին , մեր օրէնքներ այնտեղ կ'տանենք կատարել . մէկ տէրտէր կայ վեց գեղին . տարին մէկ երկու անգամ պատարագ կ'անէ . կ'ժողովինք ամէնքս ու կերթանք եկեղեցի ժամու պատարագ տեսնել եւ նորա շնորհքը վայելել , սրբութիւն առնել . կ'պատահի , մարդ կայ որ չօրս հինգ տարւով ոչ ժամ կ'տեսնայ եւ ոչ սրբութիւն կ'առնէ . բայց վայ մեզ , Աստուած չառնէ անտես , չենք հասնիր . Անցած տարիներ տէրտէր դնացեր էր ժողովք անել , օրէնքներ մնացեր էին անկատար . երեխէք տարով մնացին անմեռօն անկնունք . մեռելներ առանց օրհնելու թաղիցինք . մինչեւ հասաւ տէրտէր նոր օրհնիթք կարդաց նոր կնունք արաց . . . :

ժԻ .

Այս պատմութիւնը առանց երկարելու բաւական համարենք , բայց անբաւ պէտքէ յաւենք . այս եւ սյսպիսի հոգեկան կեանք վարօղ ժողովրդեան վրայ սքանչանամք ոչ միայն թէ ինչպէս ուսերէ նա կ'օճէք . կամ ինչպէս ճանաչերէ իւր հաւատքը . այլ աւելի սքանչանամք որ ինչպէս ջիյուսահատիր եւ չի մոլորվիր երբէք իւր հաստատութիւնից , եթէ այսպէս , հաւատանք ասոյս ուրեմն որ նոցա հո-

գւոյ ուսուցիչ եւ հաւատոյ դաստիարակն է սուրբ Հոգին . եւ սորա համար է որ այն տգէտ սիրտերը ոչ յուսահատութիւն կ'զգան , ոչ Արարչէն կ'դժգոհան , ոչ չարամիտ համոզանաց կանսան . ոչ բարբարոս բռնութեանց կ'վախնան . որք ամէն դէպքերու մէջ ամէն խօսքերու մէջ առիթ կանեն սպառնալու կամ համոզելու հաւատաւորութեան մասին : Բայց շինական Հայն ինչով կ'դիմադրէ կամ կ'պատասխանէ , մէկին՝ սուրբ տգիտութեամբմը . միւսին՝ սուրբ համբերութեամբմը . մէկին խօսքերէն զգուշելով կ'արհամարհէ զանի , եւ միանգամայն անմեղ հայհոյութիւն մի էլ ետեւէն կ'ծխէ . միւսէն՝ որովհետեւ կ'վախնայ , ուստի լռելով եւ յամառելով միայն կանցուցէ . եւ թէ քանի հատ էլ խօսն գլխին , դարձեալ ձայն չի հաներ , լռելով կրելով զայն իւր հաւատքի սիրոյն :

ԺԳ.

Ահա երեկոյ եղաւ , արի երթանք այն ծառի տակ խաչաբարի հանդէպ , տես այն կիներ ճրագ վառերէ եւ խուկ կրակի վրայ դրած կծխէ . ինքը խոնարհած գետնամած երկըրպագութեամբ ծնկները ծալած եւ գլուխը դէմ այն խաչին դրած ինչպէս աղիողորմ եւ սրտառուչ տէր ողորմեա կ'անէ . տես նորա աչաց արցունքը ողջ թրջեցին այն յատակը . տես ինչպէս տագնապած իւր կուրծքը կ'հարկանէ , ձեռները բազուկներ տարածած դէպի երկինքը լալով կոծելով կ'աղօթէ . տես եւ այն երկու անմեղ երեխայք իրեն զաւակներն են . որ նորա երկու կշիւց կայնած նորա նմանութեամբ կ'խոնարհին յերկրպագութիւն , երեսնին կ'խաչակնքեն եւ « Օրհնեալ է Աստուած . փառք քեզ

Աստուած . Աստուած մեղայ , Տէր ողորմեա » կտան :

Ի՞նչ օրինակ կ'գտնես այս կերպ եւ անապատական կամ
ձգնաւորական աղօթից մէջ . Ի՞նչ վարք կ'գտնես նոցա եւ
միանձանց կրօնաւորութեան մէջ :

ԺԴ .

Գիշեր դէմ բարիլուսոյն արի երթանք աղբիւրի գլու-
խը . այս ծառերու վրայի եւ մացառներու միջի թառած
թռչնոց ձայն ու գեղգեղանքը կ'լսես . բայց կաց, եւ ա-
հա աղօթարան կ'բացվի . խումբ մի աղջկունք սափոր ի-
րենց թեւերուն վերայ . մայրեր նոցա ետեւէն կու գան . ա-
հա լցին սափորներ, լուացին իրենց ձեռներ ու երեսները .
դարձան երեք երեք անգամ խաչ հանել երեսներն, ծունր
դնել գետին եւ փառք տալ Արարչին . ու սկսան երգելով
միմիջաւով դէպի տունը դառնալ : Ինչպէս թուեց քեզ այս
տեսարան . այս կերպ Աստուած պաշտուածիւն :

ԺԵ .

Այն կողմն էլ տես , պառաւ մեծ մայրը իւր թռչներ
զարթնցուց, երեսներն լուաց եւ կանգնեցուց դէմ յարե-
ւելք, որոնք երեք անգամ միասին ծունր դրին . խոնարհե-
ցան եւ ամենակալին Աստուծոյ երկրպագութիւն մատու-
ցին երեսներն խաչակնքելով եւ այսպէս ասելով . « Օրհնեալ
է Աստուած , օրհնեալ ես Աստուած : Յանուն հօր եւ որ-
դոյ եւ հոգւոյն սրբոյ : Փառք քեզ Աստուած . փառք
քեզ » : Ասա անոնեք , այժմ ի՞նչ պակաս է այս անմեղին-
րու երգը հրեշտակաց կարգից եւ օրհնաբանութիւնից :

Իսկ այն պառաւ մեծ մայրը ծանր ծանր խոնարհելով եւ երկրպագելով հետեւեալ օրհնութիւն ու աղերս իւր ամէն օրեայ սովորութեամբ կարդաց առ Արարիչն :

Հայաստանի Հայ պառաւներու աղօթք

Հայր մեր որ յերկինս . . . : Աստուած քաւեա զիս մեղաւորս , տէր ներող տէր ողորմեա , տէր դժած տէր ողորմեա . տէր դու ստեղծեր մի կորուսեր . քաղցրիկ Քրիստոս քե եմ կանչէ , քո ստեղծած հոգին չկորուսես , քո ուղիղ ճամփէն չբահնես . չտանես ահն մտքէն , չտանես ամօթն երեսէն : Աստուած քեզ փառք , դահանամ զքէն . ստեղծերես դու հուն հանես . ճարարող տէր դու ճար անես . լոյս արող տէր դու լոյս անես , հոգացող տէր դու հոգա . զամէն անձարոց ճարիկն անես արդաւն : Ղար չունիմ , իմ ճար դու ես մայր ողորմութեան սուրբ Աստուածմին : Տէր քե մեղայ . անդարձիս դարձ տաս , անզեղ ջիւ զեղջ . պոռնիկ սեւերես մեղաւոր եմ տէր , դու դիտես . իմ մեղք շատ է քան զաւագն ծովու քան զաստեղն երկնից քան զհոն երկրի . դու դիտես , դու ողորմաս , քո ողորմութիւն անչափ է . անգումանք պէ դումանք դու հանես տէր . դու ամէն շաւիղ ամէն փորձանքից պարզիրես պահես , անօրինի չարից , անլղզամի լեզուից ազատ պահես :

Բարիլուսու սիրուն Քրիստոս քե եմ կանչէ , քաղցրիկ տէր ձեռնիկ քո փէշնեմ թալէ , հոգիս քե ամանաթ եմ տուէ . ձեթ պէտ աստղունք օգնական պահապան կայնէք . Վարբէլ Սէքսչէլ հրէշտակներաց հետ ազատէք մե ամենայն փորձանքներից : Աղմտացիր մաղմտաւոր աղօթբան , բացվի վէր յամէն անձաներաց վէր յամէն կորիպ կուրպութներաց , ինոնց աստուծէն վէր մե . շաղաթաթալիս աղթբան դու բարի կամաթ հասուցես , մայր մեր մայր . Քրիստոսին քե եմ կանչէ , կամաւոր ժամեր պատարագներ դուք հիմնատ կայնէք . զամէն կարիպ

կուրպաթի բանին դործին յաջողութեն տաք , ինոնց աստղէն
մեր կարիպներաց : Աստուած դու նամարտի մուխթէջ չանես .
չու՛մ օրն մահուան . չու՛մ հանդիստ գերեզմանին : Աստուած դու
իմ չար ուղողին բարի տաս . ինչ կայ կաշու տանչ չհանես կա-
շու իրես : Այլ սուրբ սրբերէնք ձեռնիկս ձեր փէշն եմ թալէ .
դուք օգնական բարեխօս կայնէք : Բարիլուսու բարի , Բր/տոս ,
դու թեւթրիկ ցաւիկ հանգիստ մահիկ տաս , իմ տղէյներացա-
րեւշատութեն տաս , մեր կարիպներաց բանին դործին յաջո-
ղութեն տաս , դատականերաց կարողութեն տաս , իմ ձէթիկ
ձագերաց ձէնիկ դառնաս , մեր ննջեցեցոց քաղցրիկ արքայու-
թեն տաս . հացին էժնութեն . ջրին առատութեն . անձրեւի
շատութեն , մեր բազում մեղաց թողութեն . մեր լոյս հա-
ւատքին ժամ ու պատարագին հաւատարմութեն . երկրի ճոշերաց
սէր միաբանութեն . Հայոց ազգին ազատութեն : Աստուած քեզ
փառք , ումոտս քե եմ արեմ , գոհանամ քնէ Աստուած . ե-
րեսս քո հող մխիւր , տէր դու գիտես դու ողորմես : Հայր մեր :

Ի՞նչպէս . ահա այստեղ վերստին կ'կրկնեմ թէ յինպան
Հայեր իրենց քրիստոնէութեան ու Աստուածպաշտութեան
հաւատքը այս կերպով կ'ուսանին . մայր իւր որդւոյն , պա-
պը իւր թոռին այսպէս աղօթք եւ Աստուծոյ անուն , Աս-
տուծոյ սէրը եւ երկիւղ սալով տպաւորելով իւր մանկան
սրտի մէջ , նորա կենաց հեռ օրէ օր կ'զօրանայ , եւ այսպէս
զօրաւոր , սուրբ , անախտ եւ անխախտ հաւատք կ'գոյանայ
Հայ հոգւոյն մէջ : Լատինացւոց պէս հազարահազար Աս-
տուածաբանուի դաս առնող վարդապետներ կամ փրկիտ-
փայ նորադանդ բնագէտները թող գան Հայ շինականի
հեռ իրենց հաւատք եւ Աստուածգիտութիւնը փորձեն .
եւ Հայոց եպիսկոպոս , քահանայն , կամ վարդապետ , այսպի-
սի հօտ եւ այսպիսի ժողովուրդ ունենալու համար ցաւին
արդեօք թէ պարծին : Իրենք գիտեն :

Հինականի կենաց շատ մասերէն մէկն էլ յիշատակենք,
եւ այն բարեպաշտական կենաց մասը :

Նա իր երկրագործութեան հետ քրտնելով օր բուն ,
եւ այնչափ զրկանաց տուգանաց պարտապանաց չարիք
կրելով , իր հոգւոյ պէտքերը ոչ միայն աղօթքով ու ար-
ցունքով կ'հոգայ . այլ տարին քանի անգամ վանքին ձրի
կաշխատի . իւր ոչխարը կ'կթէ վանքին բաժին կ'հանէ .
պանիր կուտայ , եղ կուտայ , տարեկան պաղէ կուտայ , եւ
թէ մեռնի հողերբաժին կայ , կամ գոմէշ կամ եզ կամ կով
կամ այծ ու մաքի : Գեղացին պատրաստ է աղքատի եւ
կամ մի վանքի , մի եկեղեցւոյ , մի տէրտէրի եւ մի վարդա-
պետի անունով ժողովք արօղին տալ յօժարութեամբ եւ
առատութեամբ . թէ մի եկեղեցական տեանն դեղը է կող
ամէնքը դէմ կ'երթան . իրենց զաւակներէն կ'խլեն նոցա
կուտան . շատ կնիկներ թէ ունէին յառաջուց պահած
կամ իրենց օժիտ բերած արծաթեայ մի կամար , կամ երես-
նոց , գինգ կամ ապարանջան , թագուն խոստովանութեամբ
կուտան զայն քահանային կամ վարդապետին որ իրենց
հոգւոյ փրկութեան համար աղօթք ու պատարագ անէ .
քառասնից , ժամոց , աջհամբոյր , խաչ համբոյր , գաւազանա-
պտուղ կուտան , եւ այլն :

Արդ ո՞վ դու իմ բարի ընկեր , էլ բաւ համարէ այսքանը ,
ներե ինձ , ոչ սոցա թշուառութեան սահման կամ վերջ
կայ , եւ ոչ մեր ցաւոց սրտի կամ զգացմանց սպառումն .
էլ հողիս կսկիծս չի դիմանար՝ տեսնելով սոցա բարեպաշ-
տութիւն եւ ուրախ լինելով , տեսնելով սոցա խեղճութիւն
եւ ցաւ անելով :

ԺԷ.

Ի վերջ աղէտիցս ան քեզ աւետիս, սիրելիդ իմ Արտաշէս : Սփոփիր հոգի. Հայաստանի Թշուառութեամբ ու հայրենեաց վիշտերով վարակած սիրտդ Թող ուրախանայ փոքր ինչ, լսելով որ մեր Վասպուրական Արծուոյ ուխտ նուիրեց այս անգամ եւս ի Ժառանգութիւն Քրիստոսի սուրբ եկեղեցւոյն եւ ի ծառայութիւն հայրենեաց ոգւոյն ու ազգային սիրոյն, երեք անձնանուէր ու արժանաւոր անձինք :

Գլխիդ հոգիս վարդապետ, Յուսիկ վարդապետ եւ Վրդանէս վարդապետ :

Ի՜նչ փեմ եւ սրբազան անուներն են :

Ա՛հ, մեր Հայաստան երջանիկ ու բարի օրեր ունէր, մեծամեծ փառքեր կ'վայելէր, երբ այս անուներն եւ իրենց տէրեր իւր մէջ կենդանի ունէր. անուն են սոքա, որոց կեանքն ու յիշատակ Հայաստանի փրկութիւն՝ եւ իրենց անձանց մարտիրոսութիւն էր : Առաքելն ի հոգիք, իրենք մահ են կրեր, Հայաստանին կեանք են տուեր :

Նոքա իրենց գործքով իրենց անուն ու յիշատակ մեծացուցեր սրբազնացուցեր են. սոքա այս անուներով իրենց գործքերը մեծացուցեն եւ սրբազնացուցեն. ասյ Աստուած :

— Ի՜նչ մեծ յոյս :

Բայց ինչի է քո տարակոյս : Հաւատա սէր իմ, հաւատա, Աստուած ողորմած է եւ կարող. բաւական է որ մի անգամ իւր սէրը ձգէ Հայաստանին վերայ. այո՛ եւ կ'սիրէ նա. վասնզի ինքն իսկ սէր է. կ'սիրէ, ուրեմն եւ կ'փրկէ եւ կ'զօրացուցանէ : Տիեզերաց եւ Ժամանակաց տէր նա է. նա կ'վարէ, նա կ'փոփոխէ, ո՛հ եւ մեր Հայաստանին

եւ ամէն հայի սէրն ու տէր նա է. նա անշուշտ իւր սիրելոյն իւր ծառային կ'նայէ այց կանէ, եւ ահա իւր այսօրեայ թեան մշակներ այսպիսի անձինք կ'հանէ :

Այ՛ լար Հայի դժբաղդութեան վերայ, բազմապիսի մեք. աչքերդ դարձուր դէպի յոյս. մարդկային կենաց եւ փրկութեան միակ միջոց. եւ մեր Հայաստան ունի այս յոյսը իւր ամէն հասակի ու կարգի որդւոց կենդանութեան մէջ. եւ եւս առաւել զինքը անմահ պահող անմահական եւ սուրբ եկեղեցականութեան մէջ : Այո Հայոց եկեղեցականութիւնն անմահ պահեր եւ պիտի պահէ յաւիտեան զՀայութիւնը : Բայց դու մի՛ ասեր թէ իբրեւ տարր է նորա անմահութիւն. ոչ ոչ, այլ նա ունի իւր մէջ փառաւոր եւ լուսաւոր կեանք, մեծ զօրութիւն, մեծ շնորհք եւ ներդրութիւն : Շօշափէ ու տես :

Առանց դատելու եւ համեմատելու նախկին միջին եւ արդի դրութիւն Հայաստանեաց եկեղեցւոյն, թէ երբեմն ինչ սքանչելի եւ մեծ, ու երբեմն ինչ ողորմելի եւ խեղճ պաշտօնեաներ ունեցեր է եւ ունի, դառնանք դէպի մեր յոյսը, եւ հաւատանք որ այսուհետեւ, այսուհետեւ լուսաւորութիւն կ'խորէ ու կ'ընտրէ իւր հաւատարիմներ իւր արժանաւորներ : Գիտէ եւ զխոտանս իբաց արկանել :

Սոյն նորընծայել անձինք գրեթէ ի մանկուհի ուսել փորձել և զաստիարակեալ ազգային ծառայուէց մէջ, յաւատանքն ուրաց անկեղծ եւ նուիրական հոգւով արժանաւոր այս սրբազան եւ բարձր կոչման ու օժման համարեցան : Այո սրբաւայնպէս կ'ճանաչեն և այնպէս են, որ Բրիտանոսին հետեւելու համար իրենց անձը պիտի կորուսեն, Հայաստանին ծառայելու համար իրենց կեանքը պիտի զոհեն :

Եւ մեք աղօթեմք, սէր իմ, որ միշտ այսպէս լինին ու

այսպէս մեռնին : Սոքա եւ այսուհետեւ հայր Արծույ
թեւակից ու լծակիցներն են :

Բայց թէ ո՞վ են, պատմեմքեզ համառօտ :

Մեր հայրենակից Պ, Յակովբ Աղուանեան, որ հայր
Արծույ հետ գնացած էր օգնական ի Մուշ եւ վերադար-
ձաւ. տրա հոգւոյ եւ բարուց պնուութիւն, առ հայրե-
նիս ունեցած սիրոյ եռանդն ու աշխատութիւն. եւ ամէն
կերպ անձնական ու բարոյական կատարելութիւն ինչպէս
ինձ ու քեզ, նոյնպէս եւ շատերին յայտնի է. ահա Գրքի-
գորիս վարդապետը սա է :

Վեց տարի յառաջ՝ հայր Արծույ հետ Հայաստանին մա-
տաղ էկած Պօլսեցի Պ. Տեգրան Գալիակչեան, որ չորս
տարի վարագը մնալէն զինի, երկու տարւոյ չափ եւս ի
Բաղէշ գնացած էր, դարձեալ հայր Արծույ կամօք, ուր
իւր ունեցած հմտութեամբ ու սրտի ճշմարիտ ազգասիրու-
թեամբ աշխատելով այնտեղի ժողովրդեան եւ ուսումնա-
րաններու մէջ բաւական յառաջադիմութիւն գործեց. եւ
ուսումնասիրական եռանդ ու փափագ նոցա սրտի մէջը
հաստատեց. այսօր ամէն Բաղիշեցի Հայք առ հասարակ
կ'սրեն եւ կ'յարգեն զինքը : Սա մանաւանդ իւր գրա-
ւոր աշխատութեամբ ու գեղեցիկ խորհրդածութեամբ
Վ. Արծուոյս թերթերի մէջ ծանուցված է ուսումնասէր
Ազգայնոց. ահա եւ սա Յուսիկ վարդապետն է :

Բնիկ Վանեցի Տ. Սարգիսեան Յովհաննէս սարկաւազ,
որ ի մանկութենէ իմ սուրբ անապատը կրօնաւորված
եւ մաքուր կենցաղավարութեան ու սրտի սրբութեան կըր-
թութիւն առած. իւր հարազատ եղբայր արժանապատիւ
եւ քաջ ազգասէր Երեմիա վարդապետին հետ գնացած
ու մնացած էր ի Բաղէշ. եւ այնտեղ կ'աշխատէր Հայ

մանկանց սիրտեր ու միտքերը դաստիարակել ուսմամբ եւ երկրաշին Աստուծոյ. եւ որոյ անձին հեզուծիւն, բարուց քաղցրութիւն ու վարուց համեստութիւն շատ յարմար եւ վայելուչ էր Բրիտանի լծոյն. ահա եւ սա վրդանէս վարդապետն է :

Սրբա երեքեան Վարագը Էկան Նոյեմբերի 19 ին Հայր Աթոռոյ Հետ . որ ի Տարօնոյ Թաւա յայցելուութիւն իւր սիրեցեալ եւ կարօտ ճագուցս . դեկ . 6 ին ձեռնադրել տուաւ վերջիշեալ երեք Նորընծայք . եւ կատարելով իւր այցելուութեան պարտք ու մխիթարանքը , կպատրաստուի ահա յայս չարթու վերադառնալ ի Տարօն , ընդ որ եւ ես : Աղօթէ որ բարի լինի մեր ընթացքը , եւ ես կ խոստանամ այնկողմ մի Ազգայնոց աղէտալի ու աւետալի անդեկութիւններ գըլթով Հաղորդել քեզ . առ այժմ ուրեմն կաց բարեաւ եւ ողջ լըր , ով իմ պատուական եւ սիրելի ընկեր :

Բ. Գ. Սրուանձտեանց
Լճակերտ ժ. Ս. Ս. Կրապայ:

ԲՈՂՈՔ ՄՕՐՍ ՄԵՐՈՅ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԱՌՒ ՍՈՒՐԲԻ ԼՈՒՍԱԿՆԻ ՈՐԻՉՆ ԵՒ ԱՌՒ ՀԱՅԿ ՆԱՀԱՊԵՏ

Ով դու նահապետք որդուոց իմ թողանց,
Տեսէք տեսարան դառն վիճակիս.
Ասացէք որդուցս հերիք չէ՞ ինձ այս.
Կը թողուն խուզ որ ես տառապիմ.
Իմ տալիքս անցան միջակ դարերով,
Յորմէ մնացի ես այրի անտէր,
Վարժեն իմ որդիքս թէ ես մեռած եմ,
Կերթան աստ եւ անդ ի խնդիր խորթ մօր.
Ասացէք նոցա ես կենդանի եմ,
Երբեմն ես թմրած բայց այժմ եմ արթուն,
Ուրախ եմ սրտով որ զիս կ'յիշեն,
Յաճախ գրութեամբ զիս չեն մոռանար.
Երբեմն եւ արդեամբ ուրախ եւ զուարթ,
Իմ կենդանութեանս զինի կ'խմեն.
Ա'խ, Արեւմտեան եռանդուն որդիքս,
Ղամբարնին վառած լուսոյ ջահերով.
Քայլ առ քայլ կամին հասնիլ մօտենալ.
Երբեմն գոռալով երբեմն նազելով:
Բայց աւանդ բախտիս, խոչնդոտն ունին,
Ի ճանապարհին ապառաժ քարեր
Կեննեն դէմերնին, արգելմունք կուտան,
Չեն թողուր յառաջ գալ ինձ այցելու.
Կը փրչեն սաստիկ սառնացեալ քամի,
Շիջուցել նոցա լուսափայլ ջահեր.
Ասացէք նոցա թող չվախենան,

Այլ արիութեամբ յաղթեն ինձ հասնին ։

Իսկ Հիւսիսային ջանասէր որդիքս ,

Լաւ ունին սրտի մեծ արիութիւն .

Ուրախ եմ ուրախ , թող ետ չմնան .

Ինձ մօտ են նոքա զիս թող ճանաչեն ։

Ասացէք նոցա ես եմ ձեր ծընող ,

Ձեր մայր հարազատ այրի տառապեալ .

Դուք հայր հարազատ , ես մայր ստնտու ,

Անթիւ անհամար զաւակ ունեցանք ։

Բայց աւա՛ղ եղան շատեր ցիր ու ցան ,

Անգուժ գազանաց ժանեաց կերակուր ։

Ո՛վ դու Նահատակ ծընող հոգեւոր ,

Մեծ են քո արդիւնք եւ քո երախտիք .

Քեզ շնորհապարտ հարազատ որդիքդ ,

Թող քեզ ճանաչեն հոգւոց լուսատու ։

Իսկ դու Նահապետ իմ որդւոցս համայն ,

Խորախոյս կարդա , թող գիմեն յառաջ .

Եւ գան զիս գտնեն իմ գիրկը բազմեն .

Ո՛հ տան ինձ համբոյր սիրոյ գգուանաց ։

ՄԻՆԻԹԱՐՈՒԹԻՒՆ ՆՈՅՈՒՆՅ ԱՌ ՀԱՅԱՍՏԱՆ

Բայց այլ ինչ այդչափ ցաւօք անհնար ,

Անձամբ չարաչար ողորմ կ'տանջիս .

Անձըդ կ'հալես սիրտըդ կ'մաշես ,

Բեզի ինչ եղաւ ո՞վ մայր Հայաստան ։

Ի՞նչ կուշաթափիս գիմօք թալկազին ,

Դժուարին ցաւօք այդպէս տառապիս ,

Մի՛ լար ցաւագին բացխուփ աչքերովդ ,

Որ արտասուքներդ թառամեցուցին ։

Ձիւններն ու սառերն հալեցան արդէն,
 Գարնան հոտաւէտ ծաղկունք բուրեցան ։
 Նշյլ գիտութեան սակաւ առ սակաւ,
 Մտաւ որդւոցդ մէջ լուսով զարգացան ։
 Ամէն մարդ սիրովն Աստուծոյ վառուած,
 Ազգասիրութեան ոգւով վառուեցան ։
 Մի դու, մի այդպէս սիրուն Հայաստան,
 Մի՛ լար արտասուեր ողբալի ձայնովդ,
 Ահա քեզ պաշտպան Վեհապետք հզօրք ։
 Թագաւորք ազգաց տիրեն քո որդւոց ։
 Ուրեմն մերկացիր սեւ քօղ երեսէդ,
 Յորդորեմք սիրով հերիք է հերիք ։
 Մեք հայր նախնեթացք քո որդւոց կողմէն,
 Քեզ մխիթարել կը փութամք այսօր ։
 Եւ դու սրտապինդ ուրախ եւ զուարթ,
 Նա՛ եւ ընդ առաջ քու զաւակներուդ ։

ՄԵՍՐՈՊԵ ՔԱՀԱՆԱՅ
 ՓԱՓԱԶԵԱՆ ։

ՀԱՆԵԼՈՒԿ

Աստես կնկուղ եմ կնկուղ չեմ,
 Ենովբայ թագն եմ, էն էլ չեմ ։
 Չայն կհանեմ բայց շունչ չունիմ,
 Հրաւիրակ եմ ոտ էլ չունիմ ։
 Արքայութեան դուռ կայնած եմ,
 Ես չէզոք եմ բայց ինչ եմ ։

Ս․ Մկրտիչ Շիրոեանց
 Դրաշար Ս․ Արծուոյն ։

ԲՆՁՆԵՆՈՒԻՐ

ԳՈՐԾԱԿԵԼԷՐ ԲՆԿԵՐԵԳՐՈՒԹԵԼՆ

ՊԵՆ.Պ.Մկրտիչ Տ. Ատմեան :

ՄՈՒՇ.Ազա Վարդան Մամիկոնեան :

ՊԵՐԻՆ.Ազա Սարգիս Չաքարեան Վանեցի :

ՏՐԵՊԻ.ԶՈՆ.Պ.Ստեփան Մ. Յակովբեանց :

ՊՕԼԻՍ. Ղեւոնդ Վարդապետ ժողովան Վարդապետ :

ՏՓԵԼՍ. Պ. Համբարձում Էնֆիաճեանց հրատարակիչ
Վրասեցի Հայոց աշխարհի պատուական ամսագրոյն. Եւ
Պ. Գարեգին Մաքսատեանց :

ԳԵՆՁԵԿ.Պ.Ներսէս Տ.Ներսիսեան :

ՊԵՐԵՐԵՂ. Ընթերցողական թանգարան :

ԲՆԵՐԱՆԵՐԵՂՕԼ Տ. Վեհեան բաճանայ Օրէնա-
նալից Մեքսիկոյ ուսումնարանին :

ՆՈՐ.ՊԵՅԵՂԸԻՏ. Ազա Յարսեցի Արծրաճեանց :

ԵՐԵՒԱՆ.Պ. Համբարձում Թադեոսեան :

ՆԵԼՍ.ԶԵՒԱՆ.Մ.Մկրտիչ Թադեոսեան :

ՊԵՐԻՆ ԱԳՈՒԼԻՍ. Պ. Գապար Բաճեանց :

ՆԵՐՔԵՆ. — Ռուս մատեր Տ. Յակոբ Բաճա-
նայ Տ. Անդրեասեանց :

ՊԵՐԵՂԻՃ.Պ. Մատթէոս Նաղարեանց Ղարապաղցի
վաճառական :

ՍԵԼԵՄԵՍ. Ազա Պատաշ Արքուճաճեան :

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՆԻՒԹՈՑ օ

Շինական չայց կեանք ի չայտանն ։	65
Բաղբ մօրս մերց չայտանի առ սուրբ Լուսուրբիչն եւ առ չայկ Նահապետ ։	94
Հանելու ։	96

ԳԻՆ ՏԱՐԵԿԱՆ ԸՆԿԵՐԱԳՐՈՒԹԵԱՆ ԿԱՆՈՒԿ
 Ի Վան ։ 'ի Բաղէշ, 'ի Մուշ, 'ի Կարին, երկուսն ի
 Օսմանցի խան շահ-ընայ արձաթ Մէճիպիէ ։
 Իսկ Պօլիս է- Տաճկաստանիս-ընդ խաղաքները էրէս ար-
 Զաթ խան շահ-ընայ Մէճիպիէ ։
 Ի Ռուսաստան է- 'ի Պարսկաստան չորս արձաթ Մանեթի-
 Ճանապարհին Ժախը Խըժբադիը պիպի լճաբէ ։